«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝ Եղվարդի Հ. Թաղևոսյանի անվան N2 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԻ և ԽՈՍՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ..... 5

ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԻ ԵՎ ԽՈՍՔԻ ՄԻՋԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՊԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ.....21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման հիմնական նպատակներից մեկը տվյալ ժողովրդի գրական լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի նորմալ կրթությունն ու դաստիարակությունը: Լեզվի մեջ և լեզվի միջոցով է , որ երեխան շրջապատի բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու , աշխատելու և պայքարելու համար:

Երեխաները դպրոց են գալիս խոսելու, պատմելու, արտասանելու, երգելու, իրեց տեսածը , լսածը,խոհերն ու զգացումները լեզվով արտահայտելու որոշակի կարողություններով ու հմտություններով, որոնք հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունեն նրանց հետագա առաջընթացի ու մտավոր զարգացման համար:

Խոսքի զարգացման համար երեխայի դպրոցական տարիքը կարևոր և անփոխարինելի մի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան , երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում, տարերայնորեն ընկալում է լեզվի այն հիմնական յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և ուսումնական պրոցեսը դարձնել երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի և խոսքային հաղորդակցման ուսուցման ժամանակաշրջան:

Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը ուսումնական պրոցեսի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- բացահայտել խոսքի դերը մարդկային հասարակության զարգացման գործում,
- սովորողների մոտ ձևավորել հաղորդակցման հմտություններ, կարողություններ,
- նպաստել սովորողների ակտիվ գործունեությանը, գիտելիքների ինքնուրույն կառուցմանը, ինքնարտահայտմանը, քննադատական մտածողության ձևավորմանը,
- նպաստել սովորողների արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը։

ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԻ և ԽՈՍՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Սկզբումն էր Բանը (Խոսքը, Բանականությունը, Միտքը)

եւ Բանն Աստուծոյ մօտ էր. եւ Բանն Աստուած էր»։

Հովհ. 1.1

Աստվածաշնչի արարման պատմությունից տեսնում ենք, որ Աստված խոսքով ստեղծեց աշխարհը։ Միայն մարդն Իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց և տվեց խոսելու ունակություն։ Այսինքն, Աստված խոսքով ստեղծեց աշխարհը, խոսքը տվեց մարդուն և վերջում Աստծու խոսքը մարմին առավ Քրիստոսով։

Ի՞նչ կապ կա «լեզվի» և «խոսքի» միջև։ Արդյո՞ք «լեզուն» ու «խոսքը» նույն բանն են։

Այս հարցին պատասխանելու համար համեմատենք այս կատեգորիաների վերաբերյալ երկու տեսակետ՝ լեզվաբանական և փիլիսոփայական։

Լեզվաբանությունը միշտ օգտագործել է «լեզու» տերմինը. , և միայն 20-րդ դարի սկզբից հայտնվում է «խոսք» հասկացությունը. Լեզուն և խոսքը միասին կազմում են մեկ երևույթ, և միևնույն ժամանակ դրանց միջև կան հիմնարար տարբերություններ։

Եկեք ինքներս մեզ հարց տանք՝ ի՞նչ է «խոսքը»։

Խոսք- բառերի լեզուն օգտագործելու ունակություն։

Խոսքը մարդուն կենդանիներից տարբերող բնութագրիչներից է։

Խոսքը բանականության ամենամեծ դրսևորումն է։

Խոսք, հին քերականության մեջ նաև՝ բան։ «Խոսքը լեզվի իրական վիճակն է , իսկական գոյը, խոսքի մեջ է, որ կոնկրետանում, միս ու արյուն է ստանում մեր լեզվական պոտենցիան, խոսքի, որ գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու, այնպես էլ կարդալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ»։ Այլ կերպ ասած՝ խոսքը, որպես

հաղորդակցման ու մտքերի դրսևորման միջոց, նույն լեզուն է՝ գործողության մեջ։ Խոսքը մարդու մեջ ծագած մտքերի, խոհերի ու զգացմունքների դրսևորման ամենակատարյալ ձևն է։ Ասում ենք ամենակատարյալ ձևը, որովհետև կան մտքերի արտահայտման կամ դրսևորման նաև այլ ձևեր՝ քանդակ, նկար, երաժշտություն, շարժումներ, ճարտարապետական կառույց և այլն, որոնց համեմատությամբ խոսքը , անշուշտ, մեծ ու անբաղդատելի առավելություններ ու հնարավորություններ ունի։

Խոսքը, որպես մտքի ու մտածողության դրսևորման կատարյալ ձև, կարող է լինել երկու տեսակ՝ ներքին և արտաքին կամ չարտահայտված, այսինքն՝ հնչյունային ձև չընդունած, մտային և արտահայտված՝ հնչյունային ձև ընդունած խոսք։ Արտաքին կամ արտահայտված խոսքն էլ իր հերթին լինում է երկու տեսակ կամ ունենում է դրսևորման երկու ձև՝ բանավոր և գրավոր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները։

Բանավոր խոսքը ծառայում է որպես մարդկանց միջև հաղորդակցման հիմնական միջոց։ Այս առումով գիրը կամ գրային խոսքը հնչյունային խոսքին օգնող , հաղորդակցման օժանդակ միջոց է և նպաստում է հնչյունային խոսքի <<վերարտադրմանն ու կայունացմանը>>։

Բանավոր խոսքը, որպես հաղորդակցման հիմնական միջոց, չնայած իր անսպառ հնարավորություններին, այնուամենայնիվ, երկու լուրջ թերություն ունի. սահմանափակությունը տարածության մեջ, որովհետև հնչյունային խոսքը ընկալելի է միայն կարճ տարածության վրա, և սահմանափակությունը ժամանակի մեջ, որովհետև հնչյունային խոսքը լսելի է միայն նրա արտաբերման պահին։

Բանավոր խոսքի համար բնորոշ առանձնահատկություններ են նաև ձայնի ելևէջն ու հնչերանգը, արտասանության բնական արագությունն ու ձայնի բնական բարձրությունը, տրամաբանական ու բառային շեշտերը։ Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որը, ճիշտ է , ավելի մշակված, հղկված ու կատարյալ է, սակայն մի տեսակ

«արհեստական, ձեռքբերովի լեզու է» և մարդ այն տիրապետում է մեծ ջանքերի ու հետևողական աշխատանքի շնորհիվ։

Խոսք կառուցելու կարողությամբ երեխաները օժտված են դեռևս դպրոց գալուց շատ առաջ, սակայն միշտ չէ, որ այդ կարողությունը իր դրսևորման մեջ անթերի ու կատարյալ է լինում։ Ուսուցչի հիմնական խնդիրներից մեկն էլ երեխաների մեջ այդ կարողության հետագա մշակումն ու կատարելագործումը պետք է լինի՝այն հաշվով, որ այն վերածվի լեզվական հմտության։

Խոսք կառուցելու կարողությունը կամ ձիրքը Ուշինսկին համարում էր ուժ, որը ամրապնդվում ու զարգանում է վարժվածության միջոցով։ Խոսքի ուժը շատ հաճախ պայմանավորված է նրա պարզությամբ ու հստակությամբ։ Պարզ ու ընկալելի, հստակ ու դիպուկ կերպով ձևակերպված մտքերը խոսքը դարձնում են անմիջական, ներգործուն ու նպատակաուղղված, ուստի պետք է ձգտել դեռ վաղ տարիներից երեխաների մեջ խոսքի հստակության ու պարզության ճաշակ զարգացնել։ Այս ուղղությամբ՛անհրաժեշտ աշխատանք պետք է տանել և՛ տանը, և՛ դպրոցում, և՛ դասի ժամանակ, և՛ դասից դուրս։ Երեխան դպրոց է գալիս արդեն իսկ հսկայական լեզվական պաշարով ու բանավոր խոսքի տիրապետման կարողությամբ, սակայն այդ խոսքը դեռ տարերային է, հաճախ լի անկանոնություններով, բարբառային բառերով, սխալ շեշտադրությամբ, չմշակված ու գրական խոսքի համար անընդունելի արտահայտություններով ու լեզվական ձևերով։ Ուսուցչի առաջին աշխատանքը աշակերտի արդեն ունեցած լեզվական պաշարի մշակումն ու հղկումը պետք է լինի։

Լեզվի մաքրման մասին խոսելիս չի կարելի աչքաթող անել նաև այն փաստը, որ այժմ ինչպես մեծերի, այնպես էլ երեխաների խոսքի մեջ, հաճախ են հանդիպում տարբեր լեզուներից վերցված բազմաթիվ բառեր, արտահայտություններ ու լեզվամտածողության ձևեր։

Բանավոր խոսքը դրանից ավելի շատ է տուժում, քան գրավորը, քանի որ խոսելիս մարդ հնարավորություն չի ունենում հանգամանորեն մտածելու, իր խոսքը չափ ու ձևի տակ դնելու, որպիսին կարող է անել գրելիս։

Ինչպես Ս. Մանդինյանն էր ասում, դպրոցը պետք է աշակերտի հոգին զարգացնի, մտքին խորհելու կարողություն տա, զորեղացնի ու լայնացնի նրա ունեցած պատկերացումներն ու դրանց շրջանակը, նոր պատկերացումներ ու հասկացություններ հայթայթի, նորանոր պատկերացումներ հորինելու ունակություն տա, իրերին ու երևույթներին մտքով տիրապետելու վարժվածություն ու կարողություն հաղորդի։

Աշակերտի բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման միջոցներն ու ձևերը բազմազան են. դրանք սկսվում են կենդանի խոսքի ընդօրինակումից մինչև հռետորական ու ասմունքի արվեստի ձևերի ուսուցումը։

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի ուսուցչի խոսքը, որովհետև ինչպես որ ուսուցիչն է խոսում , այնպես էլ նրա աշակերտներն են ձգտում խոսել՝ նմանվել նրան, ընդօրինակել նրա բատերը, նախադասություններ կազմելու ձևերը, արտահայտությունները, լեզվական-արտահայտչական միջոցները և նույնիսկ խոսելու տոնն ու եղանակը։

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման տեսակետից ուսուցչի խոսքը հսկայական նշանակություն ունի՝ որպես կենդանի , զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող, նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսքի։ «Բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքն ավելի խորն է ազդում մարդու վրա, քան կարդացածը։ Լսելով այս կամ այն թեմայի մասին ուսուցչի կանոնավոր-լեզվով ու գրական արտասանությամբ պատմածը՝ աշակերտը մեծ չափով ազդվում է նրանից, ընդօրինակում նրա թե՛ ճիշտ լեզուն և թե՛ գրական արտասանությունը»,-նշել է պրոֆեսոր Գ. Էդիլյանը։

Այս առումով ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, որպեսզի աշակերտին դյութի, տանի իր ետևից, զգալ ու սիրել տա մեր լեզուն, նրա գիտակցությանը հասցնի մեր լեզվի քաղցրությունն ու բարեհնչյունությունը, հարստությունն ու ճոխությունը:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու դեր ունի ընկալածի վերարտադրությունը: Տեսածի, լսածի ու կարդացածի վերարտադրությունը ոչ միայն նպաստում է տպավորությունների ու պատկերացումների ուժեղացմանն ու կայունացմանը, այլև մեծապես օգնում է երեխայի խոսքի զարգացմանը: Տեսածի վերարտադրությունը հնարավորություն է տալիս երեխայի տեսած գործողությունները, դեպքերն ու դեմքերը, բնական ու հասարակական երևույթները, մարդկանց գործունեությունն ու փոխհարաբերությունները, իր վերաբերմունքն ու ապրումները վերարտադրել համապատասխան բառերով ու արտահայտություններով, սովորել դրանց լեզվական ձև տալ:

Լսածի վերարտադրությունը նպաստում է երեխայի մեջ ուշադրության ու հիշողության դաստիարակմանը, հնարավորություն է տալիս ընդօրինակել ուսուցչի կամ լավ պատմող աշակերտի խոսքը, բազմաթիվ նոր բառեր ու լեզվական-արտահայտչական ձևեր սովորել և դրանք կիրառել իր խոսքի մեջ:

Կարդացածի վերարտադրությունն օգնում է ինչպես ընթերցածը լավ մտապահելուն և աշակերտի մեջ պատմելու կարողություն մշակելուն, այնպես էլ զարգացնում ու կատարելագործում է երեխաների բանավոր խոսքը, որովհետև վերարտադրելու ժամանակ աշակերտն աշխատում է օգտագործել ուսումնասիրած բնագրում եղած բառերն ու դարձվածքները, միտքը շարադրելու ձևերն ու եղանակները: Այս ամենը, անկասկած, մեծ չափով նպաստում են երեխայի խոսքի զարգացմանը, ուստի պատմության դասավանդման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել կարդացածի բովանդակության վերարտադրմանը:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև էքսկուրսիաները, որոնց ընթացքում երեխաները շատ բան են տեսնում, շատ բաների մասին են իմանում, շատ առարկաների, երևույթների, դեպքերի, մարդկանց գործողությունների ու փոխհարաբերությունների մասին են իմանում, կարծիքներ հայտնում, տպավորություններ փոխանակում և դատողություններ անում: Այսպիսով, յուրաքանչյուր դաս-էքսկուրսիա ոչ միայն աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման կամ ամրապնդման նպատակ է հետապնդում, այլև՝ խոսքի զարգացման, որովհետև երեխան ինչքան բան գիտի, այդքան բանի մասին էլ կարող է խոսել ու արտահայտվել:

Բանավոր խոսքի զարգացման տեսակետից օգտակար են նաև ամփոփիչ դասերը: Այս դասերին երեխաները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել, ընդհանրացումներ կատարել, խոսել ու դատել, ամփոփել ու եզրակացություններ անել, իսկ այդ ամենը բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման համար շատ կարևոր նշանակություն ունի:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը մեծապես կարող են նպաստել նաև ռադիոհաղորդումների, հեռուստատեսային հաղորդումների ու կինոֆիլմերի դիտումները:

Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու կիրթ լինելու հիմնական չափանիշներից մեկն է, ամենօրյա հաղորդակցման միջոց, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը:

Գիրը կամ գրավոր խոսքը կարող է դիտվել որպես հնչյունային խոսքին օգնող հաղորդակցման օժանդակ միջոց, որի հիմնական խնդիրը հնչյունային խոսքը գրանցելը՝ ժամանակի և տարածության մեջ կայունացնելն է:

Գրավոր խոսքը առաջանում է մտքերի փոխանցման կամ կայունացման, ոչ անմիջական հաղորդակցման պահանջից և անմիջապես հիմնված է բանավոր կամ խոսակցական լեզվի վրա: Այն ուղղակի բանավոր խոսքի վերարտադրումն է գրի միջոցով: Գրավոր խոսքը պայմանական նշանների վրա է հիմնված, հետևաբար՝ գիրը, իբրև

լեզվական հաղորդակցման միջոց, կարող է պայմանական նշանների որոշակի համակարգ համարվել։

Գրավոր խոսքը դրսևորվում կամ արտահայտվում է պատմականորեն ձևավորված նշանների այն համակարգի շնորհիվ, որպիսին այբուբենն է, որին օգնության են գալիս նաև կետադրությունը, ուղղագրությունը և վայելչագրությունը, որոնք պայմաններ են ստեղծում գրավոր խոսքը որքան կարելի է բանավոր խոսքին ավելի մոտեցնելու, մտքի փոխանցման կամ բանավոր խոսքի վերարտադրման տեսակետից այն ավելի կատարյալ դարձնելու։

Գրավոր խոսքն իր մշակվածությամբ, ճշտությամբ, բառապաշարի հարստությամբ ու գեղեցկությամբ, լեզվական օրենքների ու օրինաչափությունների ճիշտ կիրառությամբ, անկասկած, ավելի բարձր ու անթերի է, քան բանավոր խոսքը, սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ, այն իր արտահայտչական հնարավորություններով շատ ավելի ցածր է, քան բանավոր խոսքը և բացարձակորեն հենվում է բանավոր խոսքի վրա։ Այն, ինչ արտահայտված կամ կայունացված է գրավոր խոսքում անպայմանորեն կա բանավոր խոսքում, սակայն բանավոր խոսքում եղած ամեն ինչ չէ, որ հնարավոր է գրավոր արտահայտել, գրավոր խոսքի մեջ կայունացնել կամ նրա միջոցով փոխանցել ուրիշներին։

Ի տարբերություն լեզվի, որը խոսողական ունակությունների ընդհանրական համակարգ է տվյալ լեզվով խոսող հանրության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ, խոսքը այդ համակարգի կոնկրետ, անհատական իրացումն է, լեզվի կենդանի զոյը, որ դրսևորվում է խոսքային գործունեության միջոցով, խոսքային ակտերով։ Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով. այն լեզվի հետ միասնության մեջ է։ Խոսքը բնորոշ է նրանով, որ այն նյութական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով (լսողությամբ, տեսողությամբ, շոշափելիքով), իրականության հետ համապատասխանության տեսանկյունից կարող է լինել ճիշտ կամ սխալ, կեղծ։ Այն անկրկնելի է, իրացվում է կապված հաղորդման որոշակի նպատակների հետ, հարմարեցվում է իրադրության հետ (խոսքային իրադրություն, ծավալվում է ժամանակի ու տարածության մեջ (խոսքային շղթա, դինամիկ է. արտադրողականությամբ սահմանափակ

չէ, իրացվում է որոշակի անհատի կողմից, պայմանավորված է անհատի ստեղծագործական ակտիվությամբ և նպատակադրումներով։

Ըստ արտահայտման եղանակի խոսքը լինում է բանավոր կամ գրավոր, արտաքին կամ ներքին։ Տարբերում են նաև հեղինակային խոսք և ուրիշի խոսք։

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում։ Պայմանավորված է խոսքային իրադրությամբ, հաղորդակցվողների փոխհարաբերությամբ, խոսողի հոգեվիճակով և այլն։ Կարևոր են նաև ուղեկցող միջոցները (միմիկա, շարժուձև և այլն)։ Հիմնականում բարձրաձայն խոսողություն է, կարող է ձայնագրվել, վերարտադրվել, հաղորդվել տեխնիկական միջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, հեռախոս)։ Արտահայտության ձևերն են՝ զրույցը, բանավեճը, դասախոսությունը, ճառը, կոչը, հայտարարությունը, երգը, չափածո և արձակ խոսքը և այլն։ Բանավոր խոսքը սահմանափակված է տարածականորեն (չհաշված տեխնիկական միջոցների գործադրումը) և ժամանակով (բանավոր միմյանց հետ կարող են հաղորդակցվել միայն ժամանակակիցները)։

Արտաքին խոսքը սովորական հնչյունական-արտասանական իրացում ունեցող խոսքն է։ Ներքին խոսքը մենախոսության այն տեսակն է, երբ խոսքը հնչյունական-արտասանական դրսևորում չունի, ուղղված չէ ինչ-որ մեկին, և եթե խոսակից էլ կա, ապա այն երևակայական է։ Գիտական, ուսուցողական և այլ շարադրանքները հենվում են հենց ներքին խոսքի վրա։

Ընթերցանությունը խոսողության այն ձևն է, երբ մեկը բարձրաձայն կամ մտքում վերարտադրում, արտաբերում է իր կամ ուրիշի գրավոր խոսքը։

Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեսքի վերածված խոսքն է. իրացվում է գրային պայմանական նշանների գործադրումով, ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով։ Այս դեպքում խոսքային իրադրություն ստեղծվում է մտովի, ոչ իրականում։ Զուրկ է բանավորին հատուկ կառուցվածքային և ոճարտահայտչական որոշ հատկանիշներից։ Կարևոր դեր են խաղում գրության եղանակները, կետադրությունը։

Գրավոր խոսքն, ի տարբերություն բանավորի, չունի տարածական և ժամանակային սահմանափակումներ։

ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԻ ԵՎ ԽՈՍՔԻ ՄԻՋԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՊԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզուն առաջացել ու ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում՝մարդկանց աշխատանքային գործունեության ընթացքում ծագած հաղորդակցման անհրաժեշտության պահանջից և հենց այդ հաղորդակցման մեջ ու հաղորդակցման միջոցով էլ այն գոյություն ունի։

Լեզուն բնության և հասարակության զարգացման պատմության ամենանշանակալից երևույթներից մեկն է, մարդու ամենակարևոր նվաճումը կենդանական աշխարհից անջատվելու ճանապարհին։ Հսկայական է լեզվի դերը մարդկային հասարակության կյանքում։ Ի՞նչ կլիներ, եթե մի օր հանկարծ մարդիկ դադարեին խոսելուց։ Նրանք այլևս չէին կարողանա մտքեր փոխանակել, հասկանալ միմյանց, և փոխըմբռնման բացակայության պատճառով կդադարեր արտադրությունը, կանգ կառներ հասարակական կյանքը, քանի որ լեզուն է այն միջոցը, որով մարդիկ մտքեր են փոխանակում, հասնում փոխադարձ ըմբռնման։ Լեզուն մարդկային հասարակության հաղորդակցման միջոցն է։ Նա ծառայում է ոչ միայն առանձին անհատներին, այլև ողջ հասարակությանը։ Լեզվի գոյությունը պայմանավորված է հասարակության գոյությամբ։ Հասարակությունից դուրս լեզու լինել չի կարող։ Հենց դրա համար էլ լեզուն բնորոշվում է որպես «մարդկային հասարակության հաղորդակցման կարևորագույն միջոց»։

Լեզվի այդ հասարակական դերն է նկատի ունեցել մեծ լուսավորիչ Խ.Աբովյանը, երբ գրել է.»Լեզուն, անշուշտ, ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ, մանավանդ, ժողովուրդը ի վիճակի չէ իր մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ՝ ավանդելու հաջորդ

սերունդներին։ Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը»։

Լեզուն և մտածողությունը գոյացել են փոխադարձ միասնության մեջ և պայմանավորված են միմյանցով։ Հաղորդակցման միջոց լինելուց առաջ լեզուն նախ մտածողության միջոց է։ Մեր ուղեղում մտքերն ու գաղափարները ձևավորվում են բառերի ու նախադասությունների միջոցով։ Եթե նույնիսկ լուռ մտածելիս լինենք, միևնույն է՝ այդ մտքերը կձևավորվեն ու կկազմակերպվեն լեզվական նյութի հիման վրա։

Լեզուն նաև շրջապատի իրականության ճանաչման միջոց է։ Ճանաչելով ու յուրացնելով բնության առարկաները, երևույթներն ու հարաբերությունները՝ մենք դրանք անվանում ենք բառերով՝ դրանով իսկ հեշտացնելով նրանց մտապահման և մտածողության մեջ օգտագործման խնդիրը։

Լեզվի միջոցով մտքեր ու գաղափարներ հաղորդելուց բացի, մենք արտահայտում ենք նաև մեր տրամադրությունը և վերաբերմունքը մտքի առարկայի նկատմամբ։ Դա է պատճառը, որ որևէ խոսք լսելիս մենք ոչ միայն հասկանում ենք նրա բովանդակությունը, այլև ոգևորվում կամ վիրավորվում, հուզվում կամ լրջանում, վշտանում կամ ուրախանում։ Հետևաբար լեզուն նաև խոսողի վերաբերմունքի արտահայտման միջոց է։

Լեզվի միջոցով է ժողովուրդն ստեղծում իր մշակույթը, կուտակում և սերունդներին փոխանցում դարերով ստեղծված մտավոր և հոգևոր գանձերը։ Հետևաբար լեզուն տվյալ ժողովրդի մտավոր մշակույթի ձևն է, նրա բաղկացուցիչ մասը։ Նրանում արտացոլվում են իր կրող ժողովրդի կենցաղի, հոգևոր կերտվածքի ու բարքերի տարրերը։ Շատ ժողովուրդներ անհետացել են, չքացել պատմության ասպարեզից առանց իրենց մասին որևէ տեղեկություն թողնելու։ Եվ նրանց լեզուն է դառնում այդպիսի տեղեկությունների միակ աղբյուրը։ Հետևաբար լեզուն ունի նաև տեղեկատվության կուտակիչ դեր։

Լեզու, մարդկային հաղորդակցության կարևորագույն միջոցը, մտածողության նյութական ձևը, որն ընդհանուր է տվյալ լեզվակիր հասարակության բոլոր անդամների և միասնական այդ լեզվով խոսող ամբողջ հասարակության համար։ Լեզվի իրացումը խոսքն է՝ իր բանավոր և գրավոր

տարբերակներով: Նպատակահարմար ենք համարում նաեւ խոսել լեզվի և խոսքի կապի մասին: Եթե լեզուն մարդկային հաղորդակցման հիմնական և կարևորագույն միջոցն է, ապա խոսքը մարդուն ներհատուկ հոգեբանական-ֆիզիոլոգիական գործունեության արտահայտությունն է, որի մեջ իշխում է գիտակցականը: Լեզվի և խոսքի միջև կա ընդհանուրի և մասնավորի, վերացականի և հստակի փոխհարաբերություն: Դիալեկտիկական այդ հակադրամիասնության մեջ լեզուն ընդհանուրն է, վերացականը, հասարակականը, իսկ խոսքը մասնավորն է, հստակը, անհատականը: Ի տարբերություն լեզվի ընդհանրական համակարգի, խոսքը անհատական իրացումն է, լեզվի կենդանի գոյը: Այսինքն՝ խոսքը լեզվի գործնականում կիրառությունն է: Խոսքը կառուցվում է բառերի և քերականական միջոցների օգտագործմամբ: Ուստի անհատը իր խոսքի կառուցման մեջ և՛ անկախ է, և՛ անկրկնելի: Խոսքը ծնվում է այն ժամանակ, երբ անձն ունենում է հոգեկան ակտիվության որևէ դրդապատճառ, որի ազդեցության տակ միտք է ծնվում: Այդ միտքը ձևավորվում է նախ ներքին խոսքում, այնուհետև արտաքին խոսքում, այսինքն՝ արտասանված բառերի նշանակություններում ասույթի ձևով: Հետևաբար, մարդուն ճանաչում են իր խոսքով կամ խոսքի կատարումով: Խոսքը կամ խոսքային գործունեությունը լեզվի տարրերի այնպիսի հաջորդականություն է, որը կառուցված է ըստ նրա օրենքների եւ համապատասխանում է այն հոգեկան բովանդակություններին (մտքերին, զգացմունքներին, հուզական վիճակներին, դրդապատճառներին և այլն):

Լեզվի խոսքային դրսևորման ձևերից մեկն էլ մտային կամ ներքին, անհնչյուն խոսքն է: Մարդու գիտակցության մեջ այս կամ այն խոսքը կազմելը հոգեկան գործունեություն է, քանի դեռ նա չի հաղորդվել ուրիշներին, մնում է որպես ներքին խոսք, անհատի մեջ ծագած ու լեզվականորեն ձևավորված միտք: Ներքին կամ մտային խոսքը բացառիկ կարևոր նշանակություն ունի մարդու կյանքում, որովհետև իր շատ առանձնահատկություններով այն մոտենում, իսկ երբեմն էլ ուղղակի նույնանում է մտածողության հետ, իսկ մարդ կյանքում ավելի շատ մտածում է, լուռ գրում ու կարդում, պլաններ ու նախագծեր է կազմում,ինքն իր հետ լինում, քան արտահայտվում է: Բոլոր այս դեպքերում մարդու մեջ գործում է ներքին, մտային կամ անհնչյուն խոսքը, որը երբեմն անհրաժեշտաբար նախորդում է բանավոր կամ գրավոր խոսքին և որովհետև մտածողության բուն պրոցեսը գերազանցապես կատարվում է ներքին խոսքի օգնությամբ, այդ

առումով այն ինչ-որ չափով նախապայման է դառնում կամ հիմք է ստեղծում արտաքին խոսքի հանդես գալու համար։

Անդրադառնալով հաղորդակցման պրոցեսի էությանը՝ Ռ. Ավոյանը գտնում է , որ «ամեն մի լեզվական հաղորդակցում իրականացվում է ներքին խոսքի մասնակցությամբ, որը հաղորդողի մոտ նախորդում է հնչող նշանին, իսկ ընդունողի մոտ՝ հաջորդում»։

Այսպիսով, ներքին խոսքը մեծ ֆունկցիա ունի մարդու համար ոչ միայն նրա մտավոր աշխարհի հարստացման ու ինքնուրույնացման, այլև բուն հաղորդակցման համար, և նրա մշակման ու զարգացման ուղղությամբ դպրոցում որոշակի աշխատանք պետք է տանել։

Ներքին խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է առաջադրված հարցին պատասխանելուց առաջ պատասխանը մտքում պատրաստելու հանձնարարությունը։ Այս դեպքում երեխաները հարկադրված են լինում «մտքում խորհելու», վարժվում են իրենց պատասխանները նախապես կշռադատելու մեջ, որը և ներքին խոսքի զարգացմանը նպաստող առաջին նախապայմանն է։ Երկրորդ նախապայմանը մտքում կամ լուռ կարդալու կարողության մշակումն է, որը կատարվում է ձայնով կարդալուն զուգընթաց, բայց ավելի դանդաղ ընթացքով։

Այս տեսակետից լեզուն հանդես է գալիս որպես հոգեկան գործունեություն, իսկ դրա արդյունքը՝ մարդու մեջ կազմված ներքին խոսքը, որպես հոգեբանական երևույթ։ Թե՛ գիտակցությունը, թե՛ մտածողությունը և թե՛ լեզուն ու խոսքը հոգևոր գործունեության բարձրագույն աստիճանն են ներկայացնում, որն իրականացվում է ուղեղի կողմից։ Դրանով իսկ լեզուն մի կողմից հանդես է գալիս իբրև ներքին հոգեկան գործունեություն, մյուս կողմից՝ իբրև դրա արդյունք՝ հոգեբանական երևույթ (ներքին խոսք)։ Ներքին խոսքը, երբ մտադրվում է արտահայտել, համապատասխան խոսելու գործարանները գործի են անցնում և հաղորդում միտքը։ Դրանով էլ ներքին խոսքը դառնում է արտաքին խոսք։ Լեզուն որպես հաղորդակցման միջոց ենթադրում է հոգեբանախոսական գործունեություն խոսողների միջև։ Խոսողների մեջ տեղի է ունենում իրար հաջորդող և իրար հետ սերտորեն կապված բնախոսական ու հոգեկան գործունեություններ։ Ծառայելով հասարակությանը՝ որպես հաղորդակցման միջոց, լեզուն ամբարում ու պահպանում է իր մեջ հասարակության գործունեության արդյունքները՝

հասարակական փորձն ու գիտելիքները և դրանք փոխանցում հաջորդ սերունդներին։ Լեզուն հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում արտացոլում է իրենով խոսող հանրության գիտակցությունը, նրա մշակութային, գիտական, արտադրական ու քաղաքական գործունեության նվաճումները։ Լեզուն միևնույն ժամանակ պայմանավորում է հասարակության անդամների համատեղ գործունեությունը, բուն իսկ հասարակության միասնությունը։ Ինչքան զարգանում է հասարակությունը և հասարակական գիտակցությունը, այնքան էլ զարգանում է լեզուն և դրանով իսկ տվյալ էթնոսի, ազգի և ժողովրդի հավաքական գիտակցությունը, ազգային գիտակցությունը։ Ուստի կարող ենք ասել, որ լեզվի միջոցով ձևավորվում է մարդու անհատականությունն ու ազգի հավաքական կերպարը։

«Խոսքը» կոնկրետ խոսք է, որը տեղի է ունենում ձայնային կամ գրավոր ձևով, այն ամենն է, ինչ ասվում և գրվում է՝ ծանոթների զրույց, ելույթ հանրահավաքում, փաստաբանի ելույթ, գիտական շարադրություն, բանաստեղծություն, պատմվածք, հաշվետվություն և այլն։

Բայց խոսքն անհնար է առանց լեզվի։ Օրինակ, օտար խոսքը կընկալվի որպես անհասկանալի շարունակական բզզոց, որում դժվար է տարբերակել բառերը, նախադասությունները, եթե մենք չգիտենք լեզուն։ Խոսքը կառուցված է լեզվի օրենքներով, արտադրվում է լեզվով, ներկայացնում է դրա մարմնավորումը, իրականացումը։ Ինչպես գրել է Լ.Լ.Վերժբովսկին։

«Լեզուն և՛ գործիք է, և՛ խոսքի արդյունք»։ Այսինքն՝ լեզուն ստեղծում է խոսք և միաժամանակ ինքն իրեն ստեղծում խոսքի մեջ։

Լեզուն որպես հասարակական հաղորդակցման միջոց։ Հաղորդակցումն ունի երկու կողմ. մի կողմից խոսողը, հաղորդողը, մյուս կողմից՝ լսողը (կարդացողը), ընկալողը։ Մարդիկ միմյանց հաղորդում են ոչ միայն իրենց մտքերը, այլև հույզերը, ապրումները, ցանկություններն ու ձգտումները, համակրանքն ու հակակրանքը և այլն։ Այս բոլորն իրացնելով կամ իրականացնելով՝ լեզուն կատարում է իր հասարակական դերը՝ հաղորդակցման դերը։

Հաղորդակցական ունակությունը կամ հաղորդունակությունը անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն

ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապը: Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն: Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ այնպես էլ խմբեր:

Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել: Դա նշանակում է կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել: Հաղորդակցման ընթացքում մարդիկ տեղեկություններ են փոխանակում, ընկալում են միմյանց, փոխազդում: Այն իրականացվում է հիմնականում տեղեկատվության տարածման հատուկ միջոցներով՝ տպագրություն, հեռուստատեսություն, ռադիո: Ըստ տեղեկատվության փոխանցման ձևերի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

1. խոսքայինի, որի հիմնական միջոցներն են՝

- բանավոր խոսք,
- գրավոր խոսք

Լեզուն ամբարում ու պահպանում է իր մեջ հասարակության գործունեության արդյունքները՝ հասարակական փորձն ու գիտելիքները ու փոխանցում սերունդների փորձն ու գիտակցությունը իրենց հաջորդներին:

Լեզուն որպես հասարակական երևույթ: Լեզուն սպասարկում է հասարակությանը, ուղեկցում է հասարակությանն իր ամբողջ գոյության ընթացքում՝ որպես մարդկանց հաղորդակցման համընդհանուր միջոց, ծառայում է հասարակությանը նրա գործունեության բոլոր ոլորտներում անխտիր, սկսած կենցաղից մինչև արտադրական, պետական ու քաղաքական, գիտական ու ստեղծագործական ոլորտները:

Լեզուն ընդհանուր է և միասնական իրենով խոսող հանրության համար՝ անկախ հասարակության դասակարգային շերտավորումից, քաղաքական խմբավորումներից և այլն: Լեզվի

այս համահասարակական բնույթը՝ իրենով խոսող հանրության (տոհմի, ցեղի, ժողովրդի, ազգի) համար, պայմանավորված է հասարակության, որպես ամբողջության, միասնությամբ, անկախ հակամարտ դասակարգերի գոյությունից:

Լեզվի գործառությունը վիթխարի զարգացում է ապրում գրի ստեղծումով: Գրային լեզուն վերացնում է հնչյունային լեզվով, բանավոր խոսքով հաղորդակցման տարածական ու ժամանակային սահմանափակումները և հնարավորություն տալիս մարդկանց հաղորդակցվելու հեռավոր տարածությունների վրա, մյուս կողմից՝ պատմականորեն միմյանցից հեռավոր սերունդների հետ:

Լեզու և մտածողություն.

Հաղորդակցման ժամանակ մտքերն արտահայտում ենք միմյանց հետևից հաջորդաբար արտասանվող հնչյունների զանազան հաջորդականությունների օգնությամբ՝ հնչյունների տարբեր խմբերով բառեր ու դրանց կապակցություններ ստեղծելով, որոնք ունկնդրին (խոսակցին) են հասնում օդի ալիքավորումների միջոցով: Ամեն մի հաղորդակցում ենթադրում է հասկացությունների, մտքերի ու դրանց միացությունների ձևավորում խոսողի գիտակցության մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ է այդ բոլոր հասկացությունների և դրանք մեր գիտակցության մեջ ամրակայող միավորների՝ լեզվի բառերի ու քերականական ձևերի ամբողջ համակարգի առկայությունը յուրաքանչյուր մարդու մեջ: Հենց դրանով էլ լեզուն հանդես է գալիս որպես մտածողության արդյունքների պահպանման ու փոխանցման (հաջորդաբար սերնդեսերունդ ավանդելու) միջոց, իսկ դրանով էլ՝ մարդկային ճանաչողության նվաճումները յուրացնելու միջոց: Լեզուն և մտածողությունը, նաև ազգային գիտակցությունը օրգանապես կապված են միմյանց հետ: Ուստի, լեզուն հոգևոր այն կապն է, որը մի կողմից հավատավոր մարդուն աղոթքի միջոցով հաստատուն է պահում Արարչի հետ, մյուս կողմից՝ ազգի և ժողովրդի անցյալ, ներկա և ապագա սերունդներին պահում և կապում է մի մեծ պատմական կենդանի ամբողջության մեջ: Խոսքի ընթացքում անմիջական արտահայտություն են ստանում խոսողի ապրումները, տրամաբանությունը, վերաբերմունքը, կրթությունը, դրանով իսկ հոգեբանությունը: Խոսքային մակարդակում խոսողն օգտվում է լեզվական այն միջոցներից ու ձևերից, որոնք ինքը գիտի:

Դրանով է պայմանավորված խոսողի ոճը, խոսքարվեստը։ Հոգի ու մարմին միակցության մեջ առաջնայինն ու գերիշխողը հոգին է, ուստի մարդը հոգևոր արարած է և բանական։ Մարդու լեզուն և խոսքը նրա հոգևոր կարգավիճակի դրսևորումն է։ Հոգին բարի է, ուստի արարչական։ Այսպիսին է նաև հայոց բանն ու խոսքը։ Լավ է մարմնավոր աղքատ, քան հոգևոր։ Լավ է անուն բարի, քան գանձ աշխարհի։ Խոսքը պետք է լինի տեղին, պարզ, ճշգրիտ, արտահայտիչ, համոզիչ, գեղեցիկ, հմայիչ։ Խոսքարվեստին, ճարտասանությանը հատկապես լավ պետք է տիրապետեն մանկավարժները, բժիշկները, հռետորները, ղեկավարներն ու առաջնորդները, ռազմական ոլորտում՝ հրամանատարները։ Պատերազմող Հայոց բանակի զինծառայողներին ուղղված՝ հրամանատարի խոսքը պետք է հագեցած լինի զենքի հզորությամբ, հայրենասիրական ոգով, հավատքի հաստատակամությամբ։

Լեզուն լեզվական միավորների՝ բառերի ու խոսքի մեջ նրանց հարաբերակցության միջոցների մի ամբողջական համակարգ է, որը դրսևորվում է բառային կազմի և քերականական կառուցվածքի միջոցով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ

«Ով կարողանում է հաղորդակցվել մարդկանց հետ,
նա լավ է վարում և՛ մասնավոր, և՛ ընդհանուր գործերը,
իսկ ով չի կարողանում՝
նա և՛ այնտեղ, և՛ այստեղ սխալներ է թույլ տալիս:»

Սոկրատես

«Հաղորդակցում» տերմինը ծագել է լատիներեն ,,communico,, բառից, որը նշանակում է դարձնում եմ ընդհանուր, կապում եմ, շփվում եմ: Հաղորդակցման հիմնական նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով:

- Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով /ժեստեր/, դեմքի արտահայտություններով, խոսքով, մամուլի կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրություններով, հեռախոսով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով:
- Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել. Դա նշանակում է կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և, դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել:

Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է հաղորդակցման նոր ձևեր: Այս տեխնոլոգիական առաջխաղացումները հեղաշրջել են հաղորդակցման ողջ գործընթացը: Տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են սովորողներն ու ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին, տեխնոլոգիաները սովորողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Հաղորդկացման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն:

«Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար». ասում էր Ջոն Ռոկֆելլերը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ հաղորդակցումը եղել և մնում է մարդկային կյանքի բարդագույն երևույթներից մեկը, և նրա արդյունավետության բացահայտումը եղել և մնում է շատ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածաշունչ՝ Նոր Կտակարան, Էջմիածին 1998
2. Բ. Աղայան «Լեզվաբանության հիմունքներ», Երևան 1987
3. Հր. Աճառյան «Հայերենի արմատական բառարան» հատոր 1
4. Ալբերտ Նալչաջյան «Հոգեբանության հիմունքներ», Երևան 1997
5. Ա. Տեր-Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա», Երևան 1980
6. Տ. Խաչատրյան «Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ», Երևան 2012